ՔՅՈԹԱՀԻԱՅՈՒՄ ԳԱՂԹԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԽՆԴԻՐԸ

Ս. Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Քյոթահիային[1] *(Փոքր Ասիայի արևմտյան հատվածում)՝ Աֆեմի լեռան ստորոտում գտնվող հինավուրց այս քաղաքին, պատմականորեն վիճակված էր առանձնակի տեղ գրաղեցնել և զգալի գեր խաղալ տարածաշրջանում հաջորդաբար իրենց գերիշխանությունը հաստատող ռազմաքաղաքական կազմավորումների կյանքում։ Փոքր Փռյուգիայի մաս հանդիսացող այս քաղաքը, մինչև Օսմանյան կայսրության կազմում վերջնական ամփոփումը, ականատեսն ու վկան է եղել քաղաքական թատերաբեմում ծավալված խողովոտոյզ ու փոթորկալից բազմաթիվ իրադարձությունների։*

Քաղաքն իր գոյությունն արձանագրում է մ. թ. շուրջ յոթ դար առաջ, երբ դեպի Փռյուգիա կատարած ավերիչ հարձակումների հետևանքով, Միդաս IV-ի որդի Ադրաստի սպանությունից հետո առանց իշխանական կառավարման մնացած այս տարածքներն անցան Լիդիայի թագավոր Կրեսոսի տիրապետության տակ։ Այնուհետև Փոքր Փռյուգիան (ուպահովաբար նաև Քյոթահիան) սկսեց հաջորդաբար պատմաբեմ իջնող նորակազմ պետությունների ձեռքից ձեռք անցնել՝ պարսից թագավոր Կյուրոսի, Ալեքսանդր Մեծի, Սելևկյանների իշխանության, կցվեց Խափշիկի ու Պերգամոնի թագավորություններին, ապա կազմեց կայսերական Հռոմի արևելյան նահանգներից մեկն ու դարձավ եպիսկոպոսանիստ քաղաք[3]։

Քաղաքի առևտրատնտեսական և մշակութային զարգացման համար համեմատաբար բարենպաստ պայմաններ ստեղծվեցին Բյուզանդիայի կազմավորմանը հաջորդած հարյուրամյակների ընթացքում, երբ ընդդրկվելով Արևելահռոմեական կայսրության սոցիալ-տնտեսական ու քաղաքական գործունեության ոլորտը, այն դարձավ Փոքր Ասիայի առևտրաարտնստագործական առաջավոր կենտրոններից մեկը։ XI դարը նշանավորվեց առճակատումների նոր ալիքի բարձրացմամբ՝ քաղաքական ասպարեզում հայտնվեց Սելջուկյան կայսրությունը։

1071 թ. Մանազկերտի ճակատամարտում բյուզանդական կայսր Ռոմանոս IV Դիոգենեսի պարտությունը զգալիորեն դյուրացրեց Ալփ-Ասլանի՝ Փոքր Ասիայի հետագա նվաճման հնարավորությունը։ Սելջուկների առաջխաղացումներն իրենց երկար սպասեցնել չտվեցին, արդեն 1080 թ. Քյոթահիան գրավեց սուլթան Սուլեյման Քութուլմուշը[4]։ *Քաղաքի տնօրինման իրավունքի համար մղվող պայքարը փոփոխական հաջողություններով հասավ մինչև XIII դ. առաջին երեսնամյակը, երբ Դերմիյանների իշխանական տոհմի կողմից նվաճվելուց հետո այն ճանաչվեց որպես համանուն բեյլիկության կենտրոն։ Այս ամենը քաղաքին բաժին ընկած դեռևս վերջին փորձությունները չէին։*

---

1 *Քաղաքի ներկայիս Քյոթահիա* (Kütahya) *անվանաձևը զուրկ է նրա պատմական* Cotyoeum, Kotyoeüm, Ko yom, Kutyom, *իսկ ավելի ուշ՝* Kytaya *և* Kutahiya *անուններից։ Տե՛ս* The Encyclopedia o' Islam, v. V, Leiden, 1986; Ismail Hakkı. Kütahya şehri, Istanbul, 1932, s 7.

2 Ismail Hakkı, *նշվ. աշխ.*, էջ 3։

3 Ա. Ալպոյաճյան, *Հուշամատյան կուտինահայերու*, *Բեյրութ*, *1961*, *էջ 3*։

4 The Encyclopedia of Islam, p. 539.

Հարևանությամբ գործող օսմանյան բեյլիկությունը տարածքային զավթողական քաղաքականություն էր վարում հարակից իշխանապետությունների նկատմամբ։ Գերմիյանների իշխան Սուլեյման Շահի աղջկան՝ Խաթուն Սուլթանին, Մուրադ I-ի որդի Բայազիդին կնության տալը, որն իր հետ բերում էր Էյրի Գեոլ, Թավշանլը, Սիմավ և Կուտինա քաղաքների բանալիները, թույլ տվեց խուսափել ավանդական դարձած ռազմամարտության ուղուց և քաղաքը փրկել հերթական ավերումից։

Օսմանյան տիրապետության հաստատումը, սակայն, տևական խաղաղություն չպարգևեց քաղաքին. Լենկթեմուրի՝ Փոքր Ասիա ձեռնարկած արշավանքի հետևանքով Կյոթահիան վերստին դարձավ քաղաքական հակամարտության ասպարեզ։ Գերմիյանների և օսմանյանների միջև տարածքային պատկանելիության և վերջինիս նկատմամբ ունեցած իրավասությունների հերթական անգամ հարցերում առաջացած նոր անհամաձայնություններն ավարտվեցին նրանով, որ, թեև կարճաժամկետ, շահեց երրորդ կողմը՝ 1411 թ. Կարամանների իշխանապետ Մեհմեդ I-ը Կյոթահիան կցեց իր բեյլիկությանը։

Ի վերջո, դարեր շարունակ ձեռքից ձեռք անցնող քաղաքը 1429 թ. Յակուբ Չելեբի II-ի մահից հետո, նրա կտակի համաձայն, հանձնվեց սուլթան Մուրադ II-ին և վերջնականապես ընդգրկվեց Օսմանյան սուլթանության կազմում։ Այսուհետև Կյոթահիայի հետագա ճակատագիրը սերտորեն կապվեց կայսրության պատմության հետ՝ կրելով նրա կյանքի ներքին և արտաքին բնագավառներում տեղի ունեցող անցքերի դրոշմը։

Հարյուրամյակների ընթացքում քաղաքի վերապրած վայրիվերումներն ամենից առաջ ծանրանում էին նրա բնակչության ուսերին, որը «ի յերկրէ յերկիր» ունեցած դեգերումների, ինչպես նաև ստիպողական կամ հոժարակամ գաղթերի հետևանքով, բնականաբար, չէր կարող միաէթնիկ կազմ ունենալ։ Պատմական որոշակի ժամանակահատվածում նրանց բախտակիցները դարձան նաև հայազգիները։

Պատմական հայրենիքից դեպի արևմտյան շրջաններ հայերի աստիճանական հոսքը սկսվել էր դեռևս Բյուզանդական կայսրության գոյության վաղ ժամանակներից, երբ իրենց պետականությունը կորցնելու հետևանքով նախարարական որոշ տների ավագանին ու առհասարակ ազնվականությունը, ծառայության անցնելով նոր իշխանությունների մոտ ու պետությանը հանձնելով իրենց «հայրենիք-կալվածքները», կայսրության ամենատարբեր շրջաններում առանձին հողակտորներ էին ստանում։ Արաբական տիրապետության հաստատումը արտահոսքին առավել զանգվածային բնույթ կրեց, բռնություններից ու հալածանքներից խուսափելու նպատակով արտագաղթողների շարքերը համալրվեցին սոցիալական ավելի ստորին շերտերով[6]։ Հնարավոր է, որ հենց այդ ժամանակահատվածում էլ աստիճանաբար սկսվել էր Կյոթահիայի և նրա մերձակա տարածքների հայաբնակեցման գործընթացը, որը, սակայն, պատմական ոչ մի փաստական վկայությամբ չի ամրագրվում։

Սովորականից ավելի լայն ընդգրկմամբ հայերի արտագաղթը շարունակվեց նաև սելջուկների տիրապետության օրոք։ Ա. Ալպոյաճյանի համոզմամբ, հայերը այս միջոցին են հաստատվել Կյոթահիայում. «Պետրոս Գետադարձ (1056) կաթողիկոսի ժամանակ հունաց կրոնական հալածանքներէն հայերը օտար երկիրներ մտած էին, մասնավորապես Սելջուկյանց իշխանության երկիրները, ուր բազմաթիվ քրիստոնյաներ ապաստանեցան ԺԱ դարէն մինչև ԺԳ դար։ Այդ ժամանակամիջոցին էլ մասնավորապես Կուտինայի և Էկի-

---

5 Ա. Ալպոյաճյան, նշվ. աշխ., էջ 10։

6 Р. М. Бартикян, Об особенностях участия армян в правлении византийскими и болгарскими государствами VIII—IX вв. (Культурное наследие Востока, Л., 1985, с. 258–264).

նիայի շրջակայքը բավականին հայ բնակչություն գոյություն կառներ[7]։ Ապա շարունակելով իր մտքը, հեղինակը նշում է. «1324-ին պետության մայրաքաղաքը, երբ Պրուսա փոխադրվեցավ, կուտինացի, իկոնիացի և գարամանցի հայեր հոն հաստատվեցան[8]։ Իրոք, XIV դ. Քյոթահիայում հայկական համայնքի գոյության հանգամանքը փաստող պատմական լուրջ վկայություններ կան, որոնք, սակայն, վերաբերում են ոչ թե գարի առաջին, այլ երկրորդ կեսին։

Կուտինահայության կազմավորման, նրա աստիճանական ձևավորման, համայնքի կայացման ու համալրման աղբյուրների, ինչպես նաև տնտեսական ու հոգևոր գործունեության, սոցիալական վիճակի և զբաղմունքի պատմության ուսումնասիրման առումով անգնահատելի սկզբնաղբյուր է Քյոթահիայի ս. Աստվածածին եկեղեցում կազմված «Հիշատակարանը», որտեղ XIV դ. երկրորդ կեսին Քյոթահիայում հայերի ներկայությունը հաստատող որոշակի տեղեկություններ կան։

Մասնավորապես, կազմավորված համայնքի մասին է խոսում ս. Աստվածածին եկեղեցու կառուցման հանգամանքի նկարագրությունը։ Այդ կապակցությամբ սկզբնաղբյուրը հաղորդում է. «Այլեւ սկիզբ եղաք յիշատակարանիս մեք՝ զառածեալքս մեղօք Կոստանգին էրէցն ԺԲ տանուտէրօք, և ցանկացող եղաք այս երկնահանգետ տաճարիս...։ Զեռն արկաք ի գործ եւ ի մթեր ընչից մերոց եւ շինեցաք զեկեղեցիս զայս անուն սուրբ Աստուածածնին...։ Այլ եւ հաստատեցաւ յիշատակարանս այս ի թուին. ՊՂԴ (1445)[9] ամին»[10]։ 1445 թ. Կոստանգին երեցի ու տասներկու տանուտերերի նախաձեռնությամբ եկեղեցու շինարարությունը կարող է ապացույց ծառայել, որ համայնքը տասնամյակներ առաջ է գոյացել և բավականաչափ ստվարաթիվ է։

Եկեղեցաշինության աշխատանքներին օժանդակելու նպատակով քաղաքի հայ համայնքի առանձին անդամներ տարբեր բնույթի և չափերի նվիրատվություններ էին կատարում։ Կոստանգին երեցը, օրինակ, «Ետուր գխորանին տեղն, զպախճային կէսն, զժամատան տեղն, զիցին տեղն՝ ինչ որ ի բակ դուռն սուրբ Աստուածածնայ յիշատակ»[11], վաճառական Վարդերը՝ ետ զպախճային կեսն, զտանն տեղին, ի գերեզմանին տեղին»[12], իսկ Տիրատուր երեցը ընդհանրապես եկեղեցուն է հատկացրել «մեկ խանութ էկտեմիրին դեմն»[13]։

Նվիրաբերվող ինչքը, նվիրատուների նյութական կարողության շրջանակներն ու ծավալը բացահայտելուց բացի, հնարավորություն է ընձեռում որոշակի պատկերացում կազմել նաև նրանց սոցիալական դրության մասին, առավել ևս, երբ խոսքը վերաբերում է այդչափ մեծաքանակ հատկացումներին։ Բնականաբար, այս գույքային հարստությունն ու հողային սեփականությունը չէին կարող կարճաժամկետ ձեռքբերումների ու կուտակումների արդյունք լինել, որի համար, անշուշտ, պահանջվում էր մի քանի տասնամյակից ավել ժամանակ։ Միանգամայն տեղին է այն հարցադրումը, թե ի՞նչն էր այստեղ բերել հոգևորականներ Կոստանգին և Տիրատուր երեցներին և որն էր նրանց այսչափ ունեցվածքի գոյացման աղբյուրը։ Եկեղեցաշինությունը մշտապես թելադրված է եղել օբյեկտիվ իրականությամբ և կոչվել բավարարելու ոչ թե առանձին խմբերի հոգևոր պահանջները, այլ «ծառայել»

---

7 Ա. Ալպոյաճյան, Կաղմություն առաջնորդական վիճակներու պատրիարքության Հայոց Թուրքիո (Շողակաթ, 1962, № 2, էջ 13)։

8 Նույն տեղում։

9 Բնագրում սխալմամբ՝ 1444 թ.։

10 Կուտինահայ ժամանակագրություն (այսուհետև՝ Կուտին. ժամ.), հրատարակեց Հ. Պ. Զորթյան, Վիեննա, 1960, էջ 14։

11 Նույն տեղում, էջ 15։

12 Նույն տեղում։

13 Նույն տեղում, էջ 92։

ողջ ժողովրդական հատվածի կարիքներին։ Ս. Աստվածածնի կառուցումը ևս թելադրված է եղել Քյոթահիայում XV դ. կեսերին հաստատված և, բնականաբար, դրանից ավելի վաղ առաջացած գաղթահայության հոգևոր պահանջների բավարարման նպատակով։

Այս ամենի հետ մեկտեղ, հարկ է առանձին ուշադրություն դարձնել նաև «երկնահանդեսի տաճարս» կանգնեցնել ցանկացող, աղբյուրում վկայված «ժ՚ տանուտէրերի» հիշատակության վրա[14]։ Տանուտերերի սոցիալական ինստիտուտը, անկախ տերմինի բազմիցս կրած բովանդակային ու իմաստային փոփոխություններից[15], լայն տարածում ուներ միջնադարյան հայ իրականության մեջ։ Տանուտերերը տնտեսապես ապահով, ունևոր և ազդեցիկ գերդաստանների ավագանի էին, «որոնք զգալի դեր էին խաղում համայնքների տնտեսական ու վարչական կյանքում»[16]։ Բոլոր դեպքերում, տանուտերերի ինստիտուտի գոյության փաստը ինքնին խոսուն վկայություն է, նախ և առաջ, XV դ. առաջի կեսին Քյոթահիայի հայության սոցիալական շերտավորման, ապա՝ ազգային ինքնակառավարման մարմինների ձևերի կազմավորման, որոնց գոյացումն ու հաստատումը հնարավոր էր միայն հասարակական հարաբերություններում իշխող և որոշակի ժամանակահատվածի պահանջող պատմական օրինաչափ գործընթացների աստիճանական զարգացման հետևանքով։ Հետևաբար, կուտինահայ համայնքը, որն արդեն անցել էր զարգացման այդ փուլերն ու հասել ներքուստ ինքնակայացման աստիճանի, ոչնչ է առաջացած ու ձևավորված լիներ հուշարձանում նախանշված թվականներից մի որոշ ժամանակաշրջան ավելի վաղ։

XIV դ. վերջերին Քյոթահիայում գաղթահայության ներկայության հանգամանքը փաստող կարևոր վկայություններից է «Քէօթահիոյ հին ձեռագրերի» շարքում Մկրտիչ վարդապետ Աղավնունու՝ քաղաքի եկեղեցուն նվիրարերած, Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն Կաթողիկեաց» գրվածքի էջերում պահպանված մի հիշատակություն։ «Մեկնութիւն Կաթողիկեացն» ունի երկու հիշատակարան. «գրչագրած է զայս Վահրամ անուն մեկը, չի գիտցվիր, թէ ո՞ւր և ե՞րբ։ Երկրորդ հիշատակարանեն կ'իմանանք, թե Մկրտիչ անվամբ մեկու մը որդի Անեցի Ռուղպակ՝ Քավթի (Քեոթահիոյ) եկեղեցիին հիշատակ կուտա և վերակացու կ'կարդե Արրահամ անուն մի քահանա. այս երկրորդ հիշատակարանին թվականն է Պխ Հայոց»[17]։

Սույն մեջբերումը պարզորոշ ցույց է տալիս, որ 1391 թ. Քյոթահիայում գործում էր հայոց եկեղեցի, որը և ամրագրում է համայնքի գոյության փաստը։ Հիշատակագիրը, սակայն, չի մասնավորեցնում, թե խոսքը հետագայում հայտնի ո՞ր եկեղեցու մասին է, ինչը, անշուշտ, զգալիորեն կդյուրացներ պատմական եղելության պատկերացումը։ Աղբյուրների համեմատական քննությունը, սակայն, որոշակի պարզություն է մտցնում նաև այս հարցում։ «Կուտինահայերի ժամանակագրության» վկայմամբ, XVI դ. սկզբի գրությամբ, Քյոթահիայում գոյություն են ունեցել երեք եկեղեցի. «...եւ ի բազմաց ճէլալոց[18] եկն աստ ի քաղաքս Քէօթահիու չար ու անօրէն կարմիր

14 Այս ինստիտուտին հետաքրքրաշարժ մեկնաբանություն է տալիս Ա. Ալպոյաճյանը։ Ընդհանուր առմամբ, համաձայնվելով ի դեմս «ժ՚ տանուտէրերի» գոյություն ունեցող «ազգային կազմակերպության» հետ, նա դանում է, որ հետագայում ստանալով «oinikiler» անվանումը, կասավարման այս ձևը թուրքական իշխանությունների կողմից որդեգրվեց իբրև այլազգիների վարչատարածքային մարմին (Ա. Ալպոյաճյան, նշվ. աշխ., էջ 44—45)։

15 Լ. Խաչիկյան, XIV—XV դդ. հայկական գյուղական համայնքի մասին (Պատմա-բանասիրական հանդես, 1958, № 1, էջ 115)։

16 Նույն տեղում։

17 Քյոթահիո հին ձեռագրերը (Բյուզանդիոն, Գ. Պոլիս, 1897, № 351)։

18 Հիշված թվականներին, իհարկե, ջալալիների գոյության մասին խոսք լինել իսկ չի կարող, քանզի Դելի Հասանի և Կարա Յազրջի հայտնի ապստամբությունը տեղի է ունեցել միայն XVI դ. վերջերին։ 1511—1512 թթ. Փոքր Ասիայի հարավ-արևմտյան շրջաններում Նախկուլու Բարա Թեքելիի գրոշի ներքո կանգնած ապստամբներին ջալալիներ անվանելու հան-

ղուխն բազում եւ այրեաց զքաղաքն։ Եւ ընդ նմին այրեցաւ Գ եկեղեցին. եւ ողորմութեամբն Աստուծոյ սկսան նորոգել վերստին։ Ի թուին. ՋԿԱ (1512) առաջի ամի թագաւորութեանն տաճկաց սուլթան Սէլիմին»[19]։ Հիշատակված երեք եկեղեցիներից առաջինը, անշուշտ, ս. Աստվածածինն է։ Համանման, բայց ավելի ուշ տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ հուշարձանն արձանագրում է նաև երկրորդ եկեղեցու անվանումը. «...Հասան պէկ անուն ճէլալի եկեալ է աստ քաղաքս Քէօթահիու եւ այրեալ է զքաղաքս եւ Բ եկեղեցիքն ի յետ այրեցան զսուրբ Աստուածածինն ու զսուրբ Թորոսն»[20]։ Հաջորդ եկեղեցին, որի անունը ոչ մի առիթով չի արծարծվում «Հիշատակարանի» էջերում, ս. Սարգիսն է[21]։ Այսպիսով, 1512 թ. Քյոթահիայում «ճէլալոց» կողմից այրված երեք եկեղեցիները սրանք էին։

Արդեն գիտենք, որ ըստ «Հիշատակարանի», վերոհիշյալ եկեղեցիներից առաջինի կառուցումը թվագրվում է 1445-ով։ Ս. Սարգսի գոյության թվականը նույն Մկրտիչ վրդ. Աղավնունու վկայմամբ, աղբյուրում նախանշված 1512 թ. էլ առաջ է տարվում. 1490 թ. Աստվածատուր Կաֆայեցու կողմից այս եկեղեցում շարական է կազմվել[22]։ Այս փաստը, նախ և առաջ, կնշանակի, որ ս. Սարգիս եկեղեցին պետք է 1490 թվականից էլ վաղ կառուցված լինի, ապա նաև՝ անհրաժեշտ երկրորդ «հոգևոր օջախի» կառուցմամբ պայմանավորված է հայ համայնքի արագ ընդարձակումը։ Ինչ վերաբերում է ս. Թորոս եկեղեցու ավելի վաղ ավանդված հիշատակությանը, ապա մեզ ծանոթ աղբյուրներն այդ մասին չեն խոսում[23]։

1391 թ. այս երեք եկեղեցիներից ո՞ր մեկին է նվիրաբերվել Կիլիկիայի XIII դ. հոգևոր գործչի գրվածքը՝ ս. Աստվածածնի՞ն, ս. Սարգսի՞ն, թե՞ ս. Թորոսին։ Ի տարբերություն վերջին երկուսի, ս. Աստվածածնի վաղակառույց լինելու օգտին են խոսում մեկ-երկու լրացուցիչ վկայություններ ևս։ Մ. Օրմանյանը «Ազգապատումի» էջերում, անդրադառնալով Կ. Պոլսի առաջին պատրիարք Հովակիմ եպիսկոպոսի գործունեությանը, գրում է. «Ցրիվ ակնարկներ մեզի կը ներկայեն Հովակիմ եպիսկոպոս մը, որ Կուտինա քաղաքի եկեղեցին՝ հայ եկեղեցին նորոգած է»[24]։ Մաղաքիա սրբազանի այս հիշատակումը թեև թույլ չի տալիս պարզելու վերակառուցված եկեղեցու անունը, սակայն Հովակիմ եպիսկոպոսի օրոք նորոգչական աշխատանքների ծավալման փաստն անգամ բավական է հավաստիացնելու, թե այն պետք է կատարված լիներ մինչև 1478 թ., այսինքն՝ եպիսկոպոսի մահը[25]։

Հովակիմ եպիսկոպոսի կողմից Քյոթահիայի եկեղեցու վերանորոգման հարցին, որոշակի մասնավորեցմամբ, քաղաքի թեմագրության պատմությա-

---

զամանքը (А. Д. Новичев, История Турции, т. 1, М., 1963, с. 106–108) ցույց է տալիս, որ «Հիշատակարանի» այս հատվածը գրվել է վերջիններիս մասին պատկերացում ունեցող XVI դ. հեղինակի կողմից։

19 Կուտին. ժամ., էջ 17։

20 Նույն տեղում, էջ 22։

21 Ա. Ալպոյաճյան, նշվ. աշխ., էջ 104։

22 Քյոթահիո հին ձեռագրերը (նույն տեղում)։

23 Հարկ է նշել, որ «Հիշատակարանի» երկրորդ ճառի սկզբնամասում հիշատակվում է երեք եկեղեցիների՝ միևնույն ժամանակ կառուցված լինելու հանգամանքը. «Որպէս յիշեցաք յառաջի ճառիս ի թագաւորութեանս սուլթան Մուրադին շինեցան յեկեղեցիքս» (Կուտին. ժամ., էջ 18)։

24 Մ. Օրմանյան, Ազգապատում, Կ. Պոլիս, 1900, էջ 2135։

25 Մինչև նշված ժամանակաշրջանը հայ եկեղեցուն հայտնի են երեք Հովակիմ եպիսկոպոսներ՝ 1438 թ. Կ. Պոլսի Հովակիմ եպիսկոպոսը, 1445 թ.՝ Պրուսայի և Կուտինայի առաջնորդ Հովակիմ եպիսկոպոսը և 1469 թ.՝ Փիլիպոպոլսի Հովակիմ եպիսկոպոսը։ Աղբյուրների սակավության պատճառով այս երեք եպիսկոպոսները երբեմն միավորվում են մեկ անձի շուրջ, երբեմն էլ բաժանվում միմյանցից (մանրամասն տե՛ս Հ. Ճ. Սիրունի, Պոլիս և իր դերը (1453–1800), հ. Ա, Բեյրութ, 1965, էջ 225–230)։

ներ նվիրված իր հոդվածում անդրադառնում է Մ. Աղավնունին. «Կուտինայի Առաջնորդություն կարևոր թեմերեն մին եղած է, ինչպես հիշատակարաններուն մեջ կը կարդանք՝ կանուխ ժամանակներ Պրուսայի առաջնորդության հետ միացած է, և նույն իսկ առաջին Պատրիարքը՝ Հովակիմ եպիսկոպոս, Պրուստ գտնված միջոցին, հոգևորապես կառավարած է նաև Կուտինայի թեմը, ս. Աստուածածին եկեղեցու առաջին նորոգությունը Հովակիմի օրով կատարված է»[26]։ Մեջբերումը նորոգված եկեղեցին՝ ս. Աստվածածինը անվանապես հիշատակելուց բացի, հիմք է տալիս նաև կարծելու, որ այդ աշխատանքներն իրականացվել են դեռևս «Պրուսա գտնված միջոցին»՝ նախքան Հովակիմի 1461 թ. Կ. Պոլսի պատրիարք դառնալը։

Մեր ունեցած փաստական տվյալներով մինչև 1461 թ. Քյոթահիայում գործող միակ եկեղեցին, «Հիշատակարանի» պնդմամբ, 1445 թ. կառուցված ս. Աստվածածինն է, որն ի դեպ՝ ևս կառուցվել է «ի յեպիսկոպոսութեան տեառն Հովակիմայ»[27]։

Այսպիսով, հանրագումարի բերելով վերոշարադարյալը, ելնելով եկեղեցու վերանորոգման խնդրում հոգևոր և աշխարհիկ անձանց կատարած մեծածավալ ղույթային հատկացումների փաստից, տանուտերերի ինստիտուտի առկայության վկայությունից և դեռևս 1391 թ. հայկական եկեղեցու գոյության ուղղակի հիշատակությունից, կարելի է եզրակացնել, որ արդեն XIV դ. կեսերից սկսած՝ Քյոթահիայում գոյություն է ունեցել ներքուստ լիարժեք կազմավորված և ինքնակառավարման մարմիններ ստեղծած հայ համայնք։

ВОПРОС О ВРЕМЕНИ ОБРАЗОВАНИЯ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ КЮТАХЬИ

С. П. МУРАДЯН

Резюме

История этого малоазийского города богата памятниками разных эпох. Возникновение армянской общины города обусловлено массовым вынужденным переселением армян, находивших приют в центральных областях Византии. Сопоставление и критический анализ разнородных первоисточников позволяет датировать строительство армянской церкви в Кютахьи, а следовательно, и образование общины второй половиной XIV века.

---

26 Մ. վրդ. Աղավնունի, Կուտինայի նախկին առաջնորդները (Բյուրակն, 20. VII. 900)։

27 Կուտին. ժամ., էջ 14։